

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 38/5

ք.Երևան

3 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ տարածք ներմուծված բեռնատար ավտոմեքենայի կիսակցորդի (սառնարան) համար սահմանված մաքսային արժեքի դեմ Պետրոս Հովսեփյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Պետրոս Հովսեփյանը հայտնում է, որ սույն թվականի մայիսի 8-ին իր անունով թիվ 05100022/080518/0010063 տ/հ-ով ՀՀ տարածք է ներմուծվել և համապատասխանաբար ԱՄՎ-ում թիվ 05100010/110518/0022927 ա/հ-ով ձևակերպվել բեռնատար ավտոմեքենայի կիսակցորդ սառնարան՝ 2006թ. արտադրության, «SCHMITZ SK027» մակնիշի, «WSM0000005016400» նույնացման համարանիշի: Ա/Հ-ն բաց է թողնված: Ա/Հ-ի 43-րդ սյունակում բեռի արժեքի որոշման մեթոդը դրվել է 6-րդ մեթոդ, ինչի պատճառով մաքսային արժեքը սահմանվել է 13.800 ԱՄՆ դոլար:

Պետրոս Հովսեփյանը խնդրում է թույլ տալ թիվ 05100010/110518/0022927 ա/հ-ում կատարել համապատասխան փոփոխություններ, որովհետև նա ներկայացնում է 5000 եվրոյի հ/ա, բանկի փոխանցման անդորրագիր և 5000 եվրոյի պրոֆորմա ինվոյս:

Կից ներկայացնում է համացանցում առկա տեղեկատվությունը, որի համաձայն վերը նշված կիսակցորդն ազատ վաճառքի, ցանկացած քաղաքացու համար հասանելի է 8200 եվրո սակարկելի գնով, որը թափքի և մաշվածության պատճառով սակարկվել է մինչև 5000 եվրո:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Պետրոս Հովսեփյանի կողմից 08.05.2018թ. իր անունով թիվ 05100022/080518/0010063 տ/հ-ով ՀՀ տարածք է ներմուծվել 2006թ. արտադրության «SCHMITZ SK027» մակնիշի բեռնատար ավտոմեքենայի կիսակցորդ (սառնարան):

Համաձայն Պետրոս Հովսեփյանի կողմից ներկայացված 05100010/110518/0022927 ապրանքների հայտարարագրի, նշված կիսակցորդը հայտարարագրվել է 6.717.850 ՀՀ դրամ մաքսային արժեքով՝ մաքսային արժեքի որոշման 6-րդ մեթոդով, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 45-րդ հոդվածով սահմանված պահուստային մեթոդով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

Քաղաքացի Պետրոս Հովսեփյանի կողմից 05100022/080518/0010063 տարանցիկ հայտարարագրով ՀՀ տարածք ներմուծված 2006թ. արտադրության SCHMITZ մակնիշի օգտագործված կիսակցորդը (սառնարան), համաձայն հայտարարատուի կողմից ներկայացված 05100010/110518/0022927 ապրանքների հայտարարագրի, հայտարարագրվել է 6.717.850 ՀՀ դրամ մաքսային արժեքով՝ մաքսային արժեքի որոշման 6-րդ մեթոդով, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 45-րդ հոդվածով սահմանված պահուստային մեթոդով:

Հայտարարատուի՝ Պետրոս Հովսեփյանի, կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրային արժեքը՝ 5000 եվրոյի չափով, հիմք չի ընդունվել, քանի որ հայտարարատուն չի ներկայացրել Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի 20.09.2010թ. թիվ 376 որոշման 1-ին հավելվածով սահմանված գործարքի գնի մեթոդով հայտարարագրելու համար պահանջվող պարտադիր փաստաթղթերը:

Վերոհիշյալ դեպքերում, հաշվի առնելով նաև խնդրո առարկա ապրանքի՝ նախկինում օգտագործված լինելու հանգամանքը, մաքսային արժեքը հստակ որոշելու նպատակով մաքսային մարմնի կողմից («Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 139-րդ հոդվածի համաձայն) հայտարարատուներին առաջարկվում է դիմել համապատասխան մասնագիտացված փորձաքննություն իրականացնող մարմնին, որի կողմից ներկայացված շուկայական արժեքի հիման վրա մաքսային մարմնի կողմից որոշվում է ապրանքի մաքսային արժեքը՝ համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 43-րդ հոդվածի:

Մաքսային արժեքի որոշման գործընթացում քաղաքացի Պետրոս Հովսեփյանին նույնպես առաջարկվել է դիմել համապատասխան մասնագիտացված փորձագիտական մարմնին՝ իր կողմից ներմուծված կիսակցորդի տեխնիկական վիճակի, օգտագործման պիտանելիության և արժեքի վերաբերյալ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով, որից հայտարարատուն հրաժարվել է:

Քննարկվող դեպքում մաքսային արժեքն որոշվել է համաձայն մաքսային արժեքի որոշման 6-րդ մեթոդի, քանի որ մաքսային մարմինների տեղեկատվական բազայում բացակայել է նույնանման և համանման կիսակցորդի գործարքի գնի մեթոդով կատարված մաքսային ձևակերպում: Միևնույն ժամանակ, բացակայել է մաքսային արժեքի որոշման 4-րդ և 5-րդ մեթոդով համապատասխան տեղեկատվություն: Արդյունքում, համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 45-րդ հոդվածի, մաքսային արժեքը որոշվել է 6-րդ մեթոդի հիման վրա: Նշված մեթոդով մաքսային արժեքը որոշելիս հիմք է ընդունվել ինչպես մաքսային մարմինների տեղեկատվական բազայում առկա կիսակցորդների համար որոշված մաքսային արժեքները, այնպես էլ համանման կիսակցորդի համար միջազգային առևտրով զբաղվող համապատասխան էլեկտրոնային կայքերում առկա գնային տեղեկատվությունը: Մասնավորապես, մաքսային արժեք որոշելիս հաշվի է առնվել եվրոպական տրանսպորտային միջոցների առք ու վաճառքով զբաղվող գերմանական mobile.de հանրաճանաչ կայքում առկա համանման կիսակցորդների համար առկա գնային տեղեկատվությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որպես հայտարարատուի կողմից հայտարարագրված կիսակցորդի մաքսային արժեք հիմք է ընդունվել վերոհիշյալ ուսումնասիրությունների արդյունքում առկա գնային տեղեկատվությունը, որի արդյունքում մաքսային արժեքը սահմանվել է 6.717.850 ՀՀ դրամ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ տարածք ներմուծված բեռնատար ավտոմեքենայի կիսակցորդի համար սահմանված մաքսային արժեքի դեմ Պետրոս Հովսեփյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

